

ՊԱՏԿԵՐԱԿՈՐ ԴԱՐՉԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԸ
ՋՈՆ ԳՈԼՍՈՒՐՈՂԻԻ «ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ» ԵՎ
«ԾՈՒՂԱԿԻ ՄԵՋ» ՎԵՊԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ

Դարձվածաբանությունը լեզվի անբաժան մասն է: Դարձվածաբանական միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունը՝ տարբերվելով լեզվական մյուս միավորներից¹: Նրանք խոսքում պատրաստի վերադարձվող կայուն արտահայտություն են և բնութագրվում են բաղադրիչների մասնակի կամ լրիվ վերախմաստավորմամբ՝ խոսքը դարձնելով ավելի արտահայտիչ ու ճշգրիտ:

Այս դրույթը վերաբերվում է յուրաքանչյուր լեզվի, այդ թվում՝ և անգլերենին, և թե հայերենին: Ավելին, անգլերենի այս շերտը իր բազմակողմանիության շնորհիվ մեծ հետաքրքրություն և դժվարություն է ներկայացնում ոչ միայն օտար լեզու ուսումնասիրողների, այլև թարգմանիչների համար, քանզի եթե հեղինակը օգտագործում է դարձվածք, ապա թարգմանիչը պիտի փորձի թարգմանել այն ամենայն ճշգրտությամբ: Տվյալ աշխատանքի բուն նպատակն այն է, որ ուսումնասիրվի և բացահայտվի, թե ինչպես է թարգմանիչը՝ Կարպիս Սուրենյանը, հայերեն թարգմանել անգլերենի դարձվածաբանական միավորները՝ պահպանելով իրենց հուզարտահայտչականությունը, փոխաբերությունը, պատկերավորությունը և ռճական առանձնահատկությունները համապատասխան համատեքստում:

Այժմ ժամանակն է անցնել բուն թեմային՝ Ջոն Գոլսուորդիի «Սեփականատերը» և «Ծուղակի մեջ»² վեպերի և դրանց հայերեն թարգմանության վերլուծությանը, որը կատարել է Կարպիս Սուրենյանը³: Ես կփորձեմ համեմատել Ջ. Գոլսուորդիի կողմից օգտագործված դարձվածաբանական միավորները դրանց թարգմանության ձևերի հետ, որպեսզի պարզ դառնա, թե հայոց լեզուն ինչքանով է կարողացել հաղորդել անգլերենի դարձվածաբանական միավորների իմաստները և թե ինչպես է արդյոք թարգմանիչը լուծել համարժեքության խնդիրը անգլերենի դարձվածաբանական միավորների հարանշանականության թարգմանման հարցում: Հարկ է նշել, որ ըստ թարգմանության տեսության

¹ See L. P. Smith Words and Idioms, London, 1925, p. 167

² John Galsworthy, "The Man of Property", "In Chancery", Progress Publishers, Moscow, 1974

³ Ջոն Գոլսուորդի, «Սեփականատերը», «Ծուղակի մեջ», /թարգմ.՝ Կարպիս Սուրենյան/, Երևան, 1977թ.

գոյություն ունեն թարգմանության ավանդական եղանակներ. մասնավորապես առանձնացնեն Ա. Նազարյանի ծեռնարկը⁴, որտեղ դարձվածքները թարգմանվում են հետևյալ եղանակներով՝

1. թարգմանություն դարձվածային համարժեքով
2. թարգմանություն դարձվածային համաբանությամբ
3. նկարագրական թարգմանություն
4. հականիշային թարգմանություն
5. թարգմանություն մեկնաբանությով
6. թարգմանություն դարձվածային պատճենմամբ:

1. Թարգմանություն դարձվածային համարժեքով:

Թարգմանության այս ձևը ամենաշատն է հանդիպել վերլուծության ժամանակ: Սրանք հայոց լեզվի այն դարձվածաբանական միավորներն են, որոնք նման են անգլերենի դարձվածաբանական միավորներին իրենց կառուցվածքով, տարրերի ծավալով, բառերի բուն և հարանշանակային իմաստով: Բերենք մի շարք օրինակներ. անգլերենի "to be on one's guard" դարձվածաբանական միավորը նշանակում է «ուշադիր լինել, զգոն լինել, աչալուրջ լինել», որն էլ օգտագործվել է թարգմանչի կողմից՝

Cf. "The habitual sniff on the face of Soames Forsyte had spread through their ranks, they were on their guard" ("The Man of Property", p. 30)

«Բոլորն էլ ընդունել էին այն քամահրոտ արտահայտությունը, որ սովորաբար հատուկ էր Սոմգ Ֆորսայթի դեմքին. այսօր աչալուրջ էին նրանք»:
(«Սեփականատերը», էջ 15)

Մեկ այլ համարժեքային թարգմանության օրինակ է "to look down on somebody" դարձվածաբանական միավորը, որն ունի հետևյալ իմաստը՝ արհամարհել, մեծամտանալ, և հեղինակը թարգմանել է այն՝ օգտագործելով «վերևից նայել մեկի վրա» դարձվածաբանական միավորը, որը միշտ տարբերակ է, որովհետև այն լիովին համապատասխանում է համարժեքային թարգմանության պահանջներին.

Cf. "You can't look down on a painter-you can't take him seriously enough"

(*"In Chancery"*, p. 47)

«Նկարչին վերևից նայող չես, այնքան էլ լուրջի չես առնում նրան»:

(«Օւղակի մեջ», էջ 64)

"to strike the iron while it is hot", "to let the grass grow under one's feet" դարձվածաբանական միավորներները ունեն իրենց հայերեն համարժեքները՝ «երկաթը տաք-տաք ծեծել», որն էլ հենց օգտագործվել է Կ. Սուրենյանը.

Cf. "There is a limit; we mustn't strike the iron while it is hot"

⁴ Նազարյան Ա. Դ., Թարգմանաբանական ուսումնական ծեռնարկ՝ «Ամարաս», Ե., 2000:

«Չափ ու սահման կա, և պետք է երկաթը տաք-տաք ծեծենք»:

(«Ծուղակի մեջ», էջ 93)

“And he would not let the grass grow under his feet either, he would go there at once” (“The Man of Property”, p. 177)

«Եվ պետք է տաք-տաք ծեծել երկաթը, հենց հիմա ինքն անմիջապես այնտեղ կգնա»: («Սեփականատերը», էջ 228)

Այսպիսով, քննարկված օրինակներից պարզ է դառնում այդպիսի դարձվածաբանական միավորներից մեծամասնությունը ունեն իրենց համար-
ժեքները հայերենում, որն ինքնին հասկանալի է՝ հաշվի առնելով այն փաստը, որ թե անգլերենի, և թե հայերենի դարձվածաբանական պաշարը հարուստ է:

2. Թարգմանություն դարձվածային համաբանությամբ:

Թարգմանության այս տեսակն էլ է շատ հանդիպել: Համաբանու-
թյուններն այն դարձվածաբանական միավորներն են, որոնք արտահայտում են
նույն իմաստը, սակայն տարբերվում են փոխաբերական և երբեմն էլ ոճական
իմաստով: Հաշվի առնելով քննարկված օրինակները՝ կարելի է ասել, որ անգ-
լերենի փոխաբերական դարձվածաբանական միավորների մեծ մասը թարգ-
մանվել են այս եղանակով, քանզի իմաստով և փոխաբերությամբ համընկնող
դարձվածաբանական միավորները քիչ են, և հետևաբար, համաբանությամբ
թարգմանությունն ավելի ճշգրիտ թարգմանություն է, քան համարժեքով
թարգմանությունը:

Հաճախ հայերենի դարձվածաբանությունը տալիս է մեկից ավելի հա-
մաբանություններ անգլերենի դարձվածքի համար: Այս դեպքում թարգմանիչի
ընտրությունը կախված է տվյալ համատեքստից, այսինքն՝ նա պետք է ընտրի
այնպիսի համաբանություն, որն ամենաշատն է համապատասխանում այդ
համատեքստին: Քննարկեմ “to run with the hare and hunt with the hounds”
դարձվածաբանական միավորը, որը հայերենում ունի հետևյալ իմաստը՝ «փոր-
ծել երկու անհամատեղելի գործ միաժամանակ անել»: Բացի սրանից հայերենն
ունի նաև նույնատիպ այլ դարձվածքներ՝ «երկու տիրոջ ծառա լինել», «մի
ծեղքով երկու ձմերուկ բռնել»: Հետաքրքրական է, որ Ջոն Գոլսուորդին 2
անգամ է իր վեպում օգտագործել այդ դարձվածաբանական միավորը:

Cf. “I’m not going to run with the hare and hunt with the hounds”, he thought (“In
Chancery”, p. 52)

«Չէ, ես երկու տիրոջ ծառա չեմ լինի».-մտածեց: («Ծուղակի մեջ», էջ 72)

“One can’t run with the hare and hunt with the hounds” (“In Chancery”, p. 95)

«Չի կարելի երկու նաաաստակների ետևից ոնկնել»: («Ծուղակի մեջ», էջ 133)

Ինչպես տեսանք, առաջին օրինակում Կ. Սուրենյանն օգտվել է հայերենի «երկու տիրոջ ծառա լինել» դարձվածաբանական միավորից, որը կարելի է ճիշտ համարել, քանի որ այն համապատասխանում է տվյալ համատեքստին, հոգեհարազատ է հայ ընթերցողին և նմանություն ունի Դ. Թումանյանի «Տերն ու ծառան» հեքիաթի հետ, ինչը չի կարելի ասել երկրորդ օրինակի համար: «Երկու նապաստակների ետևից ընկնել» դարձվածքը ոչ միայն հայերեն դարձվածք չէ, այլև ռուսերենի "гнаться за двумя зайцами" դարձվածաբանական միավորի պատճենումն է: Թեև այս արտահայտության իմաստը ինքնին հասկանալի է հայ ընթերցողի համար, բայց պետք էր օգտվել հայերենի դարձվածաբանությունից, որովհետև դարձվածաբանությամբ հարուստ հայոց լեզուն ունի բազմաթիվ նման օրինակներ:

Հետաքրքրական է վերլուծել "to have (be) an air" դարձվածաբանական միավորը, որը Ս. Սեֆերյանի «Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարանում»⁵ թարգմանվում է հետևյալ կերպ՝ 1) անորոշ վիճակում՝ օդից կախված լինել, 2) լսվել, օդում սավառնել, արագ սավառնել (լուրի մասին): Մինչդեռ, Կ. Սուրենյանը օգտագործել է ոչ առաջին, ոչ էլ երկրորդ իմաստները. Cf. "Bosinney looked clever, but he had also an air as if he did not quite know on which side his bread were buttered" ("The Man of Property", p. 78)

«Բոսիննի խելացի է երևում, բայց նաև ունի մի հատկություն. Թվում է, թե նա բոլորովին չգիտե՝ ո՞ր եղողից է իր հագին լուր քսվում»: («Սեփականատերը», էջ 83)

"He had an air, too, of having a joke all to himself" ("The Man of Property", p. 34)
«Նաև այնպես էր թվում նրա դեմքից, թե կարծես նա մտքում ծիծաղում է մի բանի վրա»: («Սեփականատերը», էջ 21)

Առաջին օրինակում թարգմանիչը թարգմանել է որպես «հատկություն ունենալ», որը համապատասխանում է համատեքստին, իսկ երկրորդում հավանաբար թարգմանիչը 2 իմաստները միավորել է մեկում և կարողացել արտահայտել անգլերեն դարձվածաբանական միավորի իմաստը: Հարկ է նշել, որ առնչվել եմ այնպիսի օրինակների հետ, որոնք չեն համապատասխանում համատեքստին.

Cf. "Emily was only 70! James had a grudge against his wife's youth" ("In Chancery", p. 40)

«Ղեռ միայն 70 տարեկան էր եմիլին, ու Ջեյմսը ատամ ունեռ իր կնոջ առ օսին տարիքի ռեմ»: («Ծուղակի մեջ», էջ 53)

⁵ Սեֆերյան Ս. Ս., Հոփհաննիսյան Լ.Վ., «Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան», Երևան, 1986

Այս օրինակում հայերեն «ատամ ունենալ» դարձվածքը սխալ է, քանի որ այն մարդկանց հետ չի օգտագործվում: Կարելի է առաջարկել հետևյալ համաբանությունը՝ «Ջեյմսը ատելություն էր զգում իր կնոջ ջահելության նկատմամբ»:

3. Նկարագրական թարգմանություն:

Նկարագրական թարգմանությունն գործածվում է, երբ դարձվածաբանական միավորը չունի ոչ համարժեք, ոչ էլ համաբանություն, այսինքն՝ իմաստը բացատրվում կամ նկարագրվում է թառակապակցությունների միջոցով, որի արդյունքում հուզարտահայտչական երանգավորումը բուլանում է:

Այս տիպի թարգմանություն կարելի է համարել անգլերենի "to make the best of a bad job" դարձվածաբանական միավորը, որը հայերենում ունի «արիաբար դիմանալ դժբախտությանը, համակերպվել, հաշտվել, վիշտը ցույց չտալ, տանուլ տված ժամանակ ուրախ դեմքով երևալ, սևը ներսն անել, սպիտակը՝ դուրսը» իմաստները, որոնցից թարգմանիչը չի օգտվել:

Cf. "He came back to town in a poor way, and went about with a pathetic attempt at making the best of a bad job" ("The Man of Property", p. 42)

«Նա քաղաք վերադարձավ գլուխը կախ և սկսեց սրտառու ջանքեր անել՝ մի կետա առաժեռես դուրս գալու համար»: («Սեփականատերը», էջ 32)

Այս օրինակի հայերեն տարբերակը գրառված չէ բառարաններում, սակայն ճշգրտորեն արտահայտում է անգլերենի դարձվածաբանական միավորի իմաստը տվյալ համատեքստում:

Բավականին հետաքրքիր է "the grey mare" դարձվածաբանական միավորը: Բառարանները տալիս են հետևյալ բացատրությունը՝ «կին, որ իր ամուսնուն բռան մեջ է վերցրել՝ հյու-հնազանդ է պահում»: 4. Սուրենյանը թարգմանել է այն ուրույն ձևով, որը չնայած այն բանի, որ տարբերվում է բառարաններում գրառված իմաստից, բայց միանգամայն բավարարում է տվյալ համատեքստի պահանջներին և ամբողջովին արտահայտում է իսկական իմաստը:

Cf. "I should say the grey mare was the better horse" ("The Man of Property", p. 97)

«Կարծում եմ՝ վաղոր նրա կինը գլխին կնստի»: («Սեփականատերը», էջ 109)

4. Հանահիշտիկ թարգմանություն:

Թարգմանության այս տեսակը շատ քիչ է օգտագործվել «Սեփականատերը» և «Ծուղակի մեջ» վեպերում: Դա հայերենի այն դարձվածաբանական միավորն է, որը պարունակում է հակառակ իմաստ, սակայն արտահայտում է անգլերենի հուզարտահայտչականությունը: Բերեն հետևյալ օրինակը:

Cf. "He'll come round. It won't hurt him to discover that I'm not all milk and honey"

«Ոչինչ, դա նրան խելքի կբերի: Նրան չի վնասի իմանալ, որ ես էլ մագիլներ ունեմ»: («Ծուղակի մեջ», էջ 179)

“milk and honey” դարձվածաբանական միավորը Աստվածաշնչից վերցված “the land flowing with milk and honey” արտահայտության մի մասն է: Հայերենում դրա իմաստը հետևյալն է՝ «առատությամբ լի ու ունևոր կյանք»: Այնուամենայնիվ, վեպում այն ունի դիպվածային իմաստ, մասնավորապես՝ «Քարի, բարեհամբույր, առատածեռն լինել»: Սակայն ինչպես տեսանք, թարգմանիչը դիմում է այլ միջոցի՝ օգտագործելով ժխտական իմաստով բառ դրական երանգավորմամբ դարձվածքի փոխարեն: Կարելի է ասել, որ «մագիլներ» բառը “milk and honey” դարձվածաբանական միավորի համատեքստային հականիշն է:

5. Թարգմանություն մեկնաբանություն:

Սեկնաբանության թարգմանությունների ժամանակ հուզարտահայտչակա-նությունն կորչում է, իսկ հարանշանակային իմաստը թույլ է արտահայտված: Հետևյալ օրինակը արժանի է քննարկման.

Cf. “Looks as if he might make a bolt of it- the dashing Buccaneer!” (“The Man of Property”, p. 34)

«Սեկ էլ տեսար՝ սծուհի՝ հանկարծ, կտրիճ ծովահենը»: («Սեփականատերը», էջ 21)

Անգլերենի “to make a bolt” դարձվածաբանական միավորն ունի իր հայերեն համարժեքը՝ «պուկ գալ, արագ վազել, սլանալ, փախուստի դիմել», բայց Կ. Սուրենյանն օգտագործել է այդ իմաստի խոսակցական տարբերակը՝ «կծկի», որը ճիշտ թարգմանություն է, քանզի բավարարում է տվյալ համատեքստի պայմաններին:

Նմանատիպ թարգմանությամբ է թարգմանվել նաև “to speak ill of somebody” դարձվածաբանական միավորը: Թեև վերջինիս հայերեն համաբանությունն է «անունը գցել, մեկի հասցեին վատ խոսել», սակայն այն թարգմանվել է «վարկաբեկել» մեկնաբանությամբ.

Cf. “I don’t want to speak ill of your father”-Soames went on doggedly” (“In Chancery”, p. 68)

«-Չեմ ուզում վառկաբեկել հորդ.- շարունակեց Սոմզը համառորեն»: («Ծուղակի մեջ», էջ 94)

Այս օրինակից կարելի է տեսնել, որ մեկնաբանությամբ թարգմանությունը հնարավոր է, սակայն ակնհայտ է, որ համատեքստի հուզարտահայտչակա-նությունը կորչում է: Այդ իսկ պատճառով, հարկ է հնարավորության դեպքում խուսափել մեկնաբանության թարգմանություններից:

6. Թարգմանությունը դարձվածախին պատճենմամբ:

Թարգմանության այս եղանակը անգլերենի դարձվածաբանական միավորի բառացի կամ բառ առ բառ թարգմանությունն է հայերենում, որը խորթ է հայախոսին, քանզի հայոց լեզվի դարձվածաբանության մասը չի կազմում:

Բազմաթիվ օրինակներից առանձնացնեն հետևյալ երկուսը.

Cf. "The proof of the pudding was in the eating-Bosinney had still to eat his pudding" ("The Man of Property", p. 213)

«Նախ կե՛ր աուդինգդ, հետո ասա՝ խնձոր է: Բոսինին դեռ պետք է ուտի իր պուդինգը»: («Սեփականատերը», էջ 282)

"Jo,- he said,- I should like to hear what sort of water you're in" ("The Man of Property", p. 58)

«Ձո՛ւ,- ասաց նա,- կուզեի տեղյակ լինել, թե հ՞նչ օռի մոա են քո գործերդ»: («Սեփականատերը», էջ 54)

Առաջին օրինակի թարգմանությունը, անկասկած, պահպանում է անգլերենի դարձվածքի երանգավորում է, բայց պետք է նշել, որ հայերեն թարգմանությունը նախատեսված է հայ ընթերցողի համար, որը հավանաբար անծանոթ է անգլիական "pudding"-ի իմաստին: Մինչդեռ, հայոց լեզուն ունի այդ դարձվածքի հետևյալ տարբերակները՝ «թխվածքը պիտի ուտես, նոր գնահատես; ամեն ինչ ստուգվում է գործով; դատում են արդյունքներով; խոսքով չեն դատում, այլ գործով; բանը ասելը չէ, այլ անելը»: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ օրինակին, ապա պետք է ասել, որ այն ոչ միայն չի արտահայտում անգլերեն դարձվածքի երանգավորումը, այլև ինքնին անիմաստ է: Իմ կարծիքով, ավելի ճիշտ կլիներ այն թարգմանել հետևյալ կերպ՝ «ինչպե՞ս են գործերդ, ի՞նչ ընթացքի մեջ են գործերդ», այլ ոչ թե բառացի պատճենմամբ:

Ընդհանուր առմամբ, Կ. Սուրենյանի կողմից թարգմանված «Սեփականատերը» և «Ծուղակի մեջ» վեպերը դարձվածաբանական միավորների թարգմանության տեսանկյունից կարելի է հաջողված համարել, բացառությամբ վերոնշյալ դեպքերի, որոնք այնուամենայնիվ չեն նվազեցնում նրանցից ստացված տպավորությունը հայ ընթերցողի մոտ: